

ՈՒՂԵՑՈՒՅՑ

9-րդ դասարանի ավարտական քննության

Ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2014-2015 ուստարվա 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստը կազմվում է հանրակրթական հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ գործածվող դասագրքերի հիման վրա:

1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստի առաջադրանքները ներկայացված են երեք ձևով՝ ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխան պահանջող:

Ներկայացման ձևը	Առաջադրանքի համարը	Ընդհանուր միավորը
Ընտրովի պատասխանով	1-22	22
Կարճ պատասխանով	23-30	8
Ընդարձակ պատասխանով	31-35	5
ԸՆԴԱՄԵՆԸ	1-35	35

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխանելու համար աշակերտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է կախված նրա քննական արդյունքը:

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել միակ ճիշտ պատասխանը:

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանների գրառման համար պատասխանների ձևաթղթում նախատեսված են համապատասխան տեղեր: Յուրաքանչյուր առաջադրանքի պատասխանը (բառ, բառակապակցություն, թիվ, թվային արժեք՝ չափման միավորով) պետք է գրել պատասխանների ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում (օրինակ՝ մագնիս, կինետիկ էներգիա, 12, 45 կգ, 21 մ/վ և այլն): **Պատասխանը պարտադիր պետք է բերված լինի միավորների ՄՂ համակարգի, եթե առաջադրանքում լրացուցիչ հրահանգ չկա:**

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված գրառել առաջադրանքի պահանջը, ներկայացնել կատարման ողջ ընթացքը (կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով): Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում (չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ):

Աշակերտն ունի սխալ պատասխանն ուղղելու 3 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով, 1-ը՝ կարճ պատասխան պահանջող առաջադրանքների համար: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «X» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

Չ/հ	Թեմա	Միավորներ
1	Մեխանիկական երևույթներ	16
2	Ջերմային երևույթներ	6
3	Էլեկտրամագնիսական երևույթներ	6
4	Օպտիկական երևույթներ	3
5	Ատոմային միջուկի կառուցվածքը	2
6	Աստղագիտություն	2
ԸՆԴԱՄԵՆԸ		35

3. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Եթե թեստ-գրքույկում բացակայում է կարճ և ընդարձակ պատասխաններով առաջադրանքների լուծման ընթացքը, ապա միայն պատասխանների ձևաթղթում պատասխանի գրառման համար *միավոր չի տրվում*:

Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքների՝ պատասխանների ձևաթղթում ջնջումներով կատարված ուղղումների համար *միավոր չի տրվում*:

Թեստ-գրքույկը և պատասխանների ձևաթուղթը լրացվում են **կապույտ գրիչով**, իսկ ստուգումը կատարվում է **կարմիր գրիչով**:

4. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

5. Ցուցումներ

ա) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել. $\pi = 3,14$; $\pi^2 = 10$; $\sqrt{2} = 1,4$; $\sqrt{3} = 1,7$, իսկ $g = 10$ Ն/կգ:

բ) 24-րդ առաջադրանքը կատարելիս պատասխանների ձևաթղթում առաջադրանքի համարի մոտ տրված աղյուսակի համապատասխան վանդակներում որպես պատասխան պետք է գրառել ընտրված հասկացությունների միայն համարները:

Օրինակ՝

24 Ստեղծի՛ր համապատասխանություն ֆիզիկական մեծության և այն հաշվելու արտահայտության միջև:

- | | |
|------------------------|----------|
| Ա) Ծանրության ուժ | 1. A/t |
| Բ) Առածգականության ուժ | 2. kx |
| | 3. mg |

Պատ՝

Ա)	Բ)
3	2